ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

10.07.2015 17:42

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ հուլիսի 10-ին, տեղի է ունեցել ‘Փաստաբան Եզեգելյանի 2015 թ. թոշակ’ հավաստագրերի հանձնման արարողությունը: Փաստաբանների պալատը դեռևս ապրիլին հայտնել էր, որ նվիրատվության հուշագիր է կնքվել ՀՀ փաստաբանների պալատի և Ֆրանսիայի քաղաքացի ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ Ռայմոն Եզեգելյանի միջև:

Ըստ կնքված հուշագրի փաստաբան բարերար Ռայմոն Եզեգելյանը նվիրաբերելու է 80 (ութսուն) փաստաբանների համար մեկ տարվա անդամավճարների հանրագումարը:

Այսօր Փաստաբանների պալատում Ռայմոն Եզեգելյանը և փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը անձամբ հավաստագրերը հանձնեցին փաստաբաններին: Վերջիններս ընտրվել են որոշակի չափանիշներով. տարիքային, երրորդ խմբի հաշմանդամները, անչափահաս, երկու և ավելի երեխաներ ունեցող մարզերից փաստաբանական համայնքի ներկայացուցիչները:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհակալական խոսքում նշել է, որ Ռայմոն Եզեգելյանը մեկ անգամ չէ՝ իր բարեգործություններով կանգնած է փաստաբանների պալատի կողքին: Նրա խոսքով համատեղ քննարկումների արդյունքում է, որ փաստաբան-բարերարը ցանկություն է հայտնել թոշակ տրամադրել մարզի փաստաբաններին: ‘**Այս թոշակի տրամադրման նպատակն է մեղմել մարզի փաստաբանների առանց այն էլ ծանր սոցիալական վիճակը և գիտեմ, որ այն դժվարությունները, որոնք առկա են Երևանում եռակի կամ քառակի են մարզերում**’,-նշել է Արա Զոհրաբյանը:

Ռայմոն Եզեգելյանն էլ իր հերթին նշել, որ մեծ ուրախությամբ է օգնում իր հայրենակիցներին և նշել որ այն կլինի շարունակական:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Առաջարկվող նորություններ



27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

14.12.2015ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

18.01.2016ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 35 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵՋԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 1){ updateCommentsCount(window.location.href); } })